ԴԱՍԸՆԹԱՑ 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննության հարցեր

Հունվար 2022թ

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. Քաղաքացիական օրենսդրության սկզբունք է՝

ա/ ինքնապաշտպանությունը.

բ/ ըստ մեղքի պատասխանատվությունը.

գ/ մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիությունը.

դ/ տնտեսվարությունը.

2. Իրավաբանական անձի լուծարման դեպքում երկրորդ հերթին բավարարվում են՝

ա/ լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.

բ/ պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքերը.

գ/ աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

դ/ այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.

3. Ստորև թվարկվածներից ո՞րը (որոնք) քաղաքացիական իրավունքի օբյեկտ չէ (չեն).

ա/ գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.

բ/ տեղեկատվությունը.

գ/ ոչ նյութական բարիքները.

դ/ դեպքերն ու իրադարձությունները.

4. Կեղծ է համարվում՝

ա/ այն գործարքը, որը քողարկում է այլ գործարք

բ/ այն գործարքը, որը կնքվել է առանց նոտարական վավերացման,

գ/ այն գործարքը, որը կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության.

դ/ օրենքին հակասող գործարքը.

5. Անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմություն ուժով սեփականության իրավունքը հնարավոր է ձեռք բերել

ա/ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է տասը տարվա ընթացքում բարեխղճորեն և բացահայտ.

բ/ քաղաքացին, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է յոթ տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.

գ/ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.
դ/ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է տասը տարվա ընթացքում բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.

6. Գրավի իրավունքը դադարում է՝
ա/ գրավ դրված գույքը օրենքով սահմանված կարգով իրացվելու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.
բ/ բոլոր դեպքերում գրավատուի պահանջով.
գ/ բոլոր դեպքերում գրավ դրված գույքի ոչնչացմամբ.
դ/ ռեստիտուցիա կիրառելով։

7. Հայցային վաղեմությունը չի տարածվում՝
ա/ վարկային պայմանագրերի վրա.
բ/ ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա.
գ/ անհատապես որոշվող գույքը հանձնելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջների վրա.
դ/ բոլոր տեսակի վնասները հատուցելու պահանջների վրա։

8. Լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝
ա/ մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.
բ/ Դատարանը չի ճանաչել անձի լիազորությունները.
գ/ Լիազորագիրը տրվել է երեք տարուց ավել ժամկետով.
դ/ Լիազորագիրը տրվել է առանց նշելու դրա տրման օրը.

9. Ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ) գնորդն իրավունք ունի, իր ընտրությամբ՝
ա/ պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները
բ/ հրաժարվել առուվաճառքի պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.
գ/ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին հայց ներկայացնել դատարան.
դ/ պահանջել ողջամիտ ժամկետներում կոմպլեկտավորելու ապրանքը։

10. Լիզինգառուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝
ա/ լիզինգառուն խոչընդոտում է լիզինգատուին՝ իրականացնելու հսկողություն լիզինգի առարկայի նկատմամբ.

բ/ լիզինգատուն չի իրականացրել լիզինգի առարկայի հիմնական վերանորոգումը, եթե, համաձայն օրենքի կամ պայմանագրի, դա նրա պարտականությունն է.
գ/ լիզինգի պայմանագրի առարկան հստակ չի որոշվել.
դ/ լիզինգառուն մահացել է։

11. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.
ա/ կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև պատվիրատուի կողմից այն ընդունելը, կրում է կապալառուն, սակայն եթե պատվիրատուն համարվում է կետանցող, ապա այդ ռիսկն անցնում է պատվիրատուին.
բ/ կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև պատվիրատուի կողմից այն ընդունելը, բոլոր դեպքերում կրում է կապալառուն.
գ/ նյութերի, սարքավորումների, մշակման (վերամշակման) հանձնված գույքի կամ պայմանագրի կատարման համար օգտագործվող այլ գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը բոլոր դեպքերում կրում է կապալառուն.
դ/ կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կապալառուի և պատվիրատուի միջև բաշխվում է հավասարաչափ։

12. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա
ա/ փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են.
բ/ փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը.
գ/ փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները կրկնապատկվում են.
դ/ բռնագանձվում է տուժանք։

13. Եթե փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա
ա/ Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով.
բ/ Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել այն գնով, որն առաջարկվել է բաժնետերերին.
գ/ Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել շուկայական գնով.
դ/ Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել դրանց հաշվեկշռային արժեքով։

14. Բանկային ավանդի պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե
ա/ կնքվել է գրավոր պայմանագիր, և բանկային ավանդ մուծելը հավաստված է բանկային կամ դեպոզիտային սերտիֆիկատով.
բ/ կնքվել է նոտարական վավերացմամբ.
գ/ պայմանագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում.
դ/ Բանկի կողմից տրվել է ստացական։

15. Ստորև նշված պնդումներից ո՞րն է սխալ ֆրանչայզինգի պայմանագրի վերաբերյալ

ա/ Սահմանափակող պայմանները կարող են անվավեր ճանաչվել հակամենաշնորհային մարմնի կամ այլ շահագրգիռ անձի պահանջով, եթե դրանք համապատասխան շուկայի վիճակի և կողմերի տնտեսական դրության հաշվառմամբ հակասում են հակամենաշնորհային օրենսդրությանը.

բ/ Համալիր թույլտվության պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի իրավունքների սահմանափակում.

գ/ Համալիր ենթաթույլտվության պայմանագիրը կարող է կնքվել ավելի երկար ժամկետով, քան համալիր թույլտվության այն պայմանագիրը, որի հիման վրա այն կնքվել է.

դ/ Եթե համալիր թույլտվության պայմանագիրն անվավեր է, ապա անվավեր են նաև դրա հիման վրա կնքված համալիր ենթաթույլտվության պայմանագրերը։

16. Իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե

ա/ չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով.

բ/ չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի անզգուշության հետևանքով .

գ/ ապացուցում են, որ վնասը ծագել է ոչ իրենց մեղքով.

դ/ չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ մեքենայի անսարքությունից։

17. Որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման՝

ա/ վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը.

բ/ խնայված գույքը.

գ/ անհիմն հարստացման հետևանքով ստացած եկամուտները.

դ/ դրամը և արժեթղթերը։

18. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

ա/ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

բ/ եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն կամ խնամակալը, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ տեսչական մարմինը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում.

գ/ աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով.

դ/ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի։

19. Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է՝

ա/ կոլեկտիվ բանակցությունների ազատությունը.

բ/ աշխատողների անհավասարությունը.

գ/ աշխատանքային պայմանագրի ժամկետային բնույթը.

դ/ օտարերկրյա իրավունքի կիրառումը։

20. Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է միջին ամսական աշխատավարձը բաժանելով՝

ա/ 20-ի.

բ/ 21-ի.

գ/ 22-ի.

դ/ 24-ի։

21. Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա/ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

բ/ փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը.

գ/ դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.

դ/ վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել.

22. Վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝

ա/ վարչական բողոքը մերժելը.

բ/ վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը.

գ/ վարչական վարույթի ժամկետի ավարտը.

դ/ վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել.

23. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

ա/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.

բ/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.

գ/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.

դ/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

24. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը, որն ընկերության կանոնադրական կապիտալում իր ավանդն ամբողջությամբ չի ներդրել,

ա/ համապարտ պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում.

բ/ սուբսիդիար պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում.

գ/ որևէ պատասխանատվություն չի կրում.

դ/բոլոր պատասխանները սխալ են։

25. Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝

ա/ 15-օրյա ժամկետում.

բ/ ժամկետային սահմանափակում առկա չէ.

գ/ մեկամսյա ժամկետում.

դ/ բոլոր պատասխանները սխալ են.

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Խնդիր 1. /14 միավոր/

«Սիքուել» (այսուհետ՝ փոխատու) և «Ռեմեդի» (այսուհետ՝ փոխառու) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև 12.03.2017 թվականին կնքվում է գումարի փոխառության պայմանագիր, որով փոխատուն պարտավորվում է փոխառուին տրամադրել փոխառություն 10 մլն դրամի չափով՝ պայմանագրի կնքումից մեկ ամսվա ընթացքում: Պայմանագրում փոխառության վերադարձման ժամկետ չի նշվում:

Պայմանագրի կնքումից մեկ ամսվա ընթացքում փոխատուն փոխառուի բանկային հաշվին մի քանի տրանշով փոխանցում է ընդհանուր առմամբ 7 միլիոն դրամ:

Վերջին տրանշի փոխանցումից մեկ ամիս անց փոխատուն դիմում է փոխառուին՝ պահանջելով վճարել տրամադրված փոխառության գումարը:

Փոխառուն առարկում է պահանջի դեմ՝ ներկայացնելով հետևյալ առարկությունները՝

1. Փոխառության պայմանագրում ժամկետ նշված չլինելու արդյունքում փոխառուն կարող է վերադարձնել փոխառությունը իր նախընտրությամբ ցանկացած ժամանակ,
2. Առկա է հաշվանցի հիմք, քանի որ փոխատուն փոխառուի մասնակից և տնօրեն Արգամ Պետրոսյանի հանդեպ ունի 3 միլիոն դրամի փոխառության գծով պարտք:

Փոխատուն՝ չցանկանալով սրել իրավիճակը, փորձում է բանակցությունների միջոցով լուծել խնդիրը, որի ընթացքում «Ռենսինիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ցանկություն է հայտնում փոխատուից գնել փոխառուի հանդեպ տվյալ պահին առկա պարտքը 5 միլիոն դրամով:

14.02.2018 թվականին կողմերի միջև կնքվում է պահանջի գնման մասին համապատասխան փաստաթուղթ, որտեղ նշվում է հետևյալ դրույթը՝ «սույն պայմանագրով «Սիքուել» ՍՊԸ-ն ստանձնում է պատասխանատվություն «Ռեմեդի» ՍՊԸ-ի կողմից փոխառության գումարը չվերադարձնելու դեպքում՝ 2 միլիոն դրամի սահմաններում»:

Նշված գործարքի մասին փոխատուն չի հայտնում փոխառուին՝ գտնելով, որ դրա կարիքը չկա:

«Ռենսինիա» ՍՊԸ-ն 17.05.2018 թվականին դիմում է փոխառուին՝ պահանջելով վերադարձնել փոխառության գումարը, դրա վրա պայմանագրով հաշվարկված տոկոսները և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոս-ները:

Փոխառուն ներկայացնում է նույն առարկությունները, որոնք ներկայացրել էր «Սիքուել» ՍՊԸ-ին՝ նշելով նաև, որ 1 միլիոն դրամ վճարել է վերջինիս՝ բանկային փոխանցման միջոցով, 15.05.2018 թվականին, ինչպես նաև հավելում է, որ ինքը տեղյակ չէ փոխատուի փոփոխության մասին, չի տվել իր համաձայնությունը և պարտավոր չէ որևէ գումար վճարել նոր պարտատիրոջը:

«Ռենսինիա» ՍՊԸ-ն 22.09.2021 թվականին հայց է ներկայացնում ընդդեմ փոխատուի և փոխառուի՝ պահանջելով վճարել 7 միլիոն դրամ փոխառության գումարը,

դրա վրա պայմանագրով հաշվարկված տոկոսները և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսները։

«Սիքուել» ՍՊԸ-ն առարկում է հայցի դեմ՝ նշելով, որ ինքը պատասխանատու չէ փոխառուի կողմից գումարները չվճարելու համար, իսկ տոկոսների պահանջն՝ անօրինական է։

«Ռեմեդի» ՍՊԸ-ն առարկում է հայցի դեմ՝ նշելով, որ ինքը պարտավոր չէ վճարել որևէ գումար այն կազմակերպությանը, որի հետ չի կնքել որևէ պայմանագիր, իսկ հայցն էլ ենթակա է մերժման, քանի որ «Ռենսինիա» ՍՊԸ-ն ուշ է դիմել դատարան։

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը։ Կողմերից ու՞մ փաստարկներն են իրավաչափ։ Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը։ /9 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված փոխառության պայմանագրի հասկացությունը, կնքման ձևը և փոխառության գումարի վերադարձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև՝ պահանջի զիջման կանոնները։ /5 միավոր/

Խնդիր 2. /14 միավոր/

Սիմոնյանը (այսուհետ՝ աշխատող) աշխատում էր «Ֆինանս Գլոբալ Լիմիթեդ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ գործատու) որպես կոնտակտային կենտրոնի մասնագետ։

Գործատուն ֆինանսական խորհրդատվություն է տրամադրում աշխարհի տարբեր երկրներում։

Աշխատողի աշխատանքային պարտականությունն էր հաճախորդների հարցերին պատասխանելը, նախնական խորհրդատվության տրամադրումը, այդ թվում՝ նյութեր ուղարկելը։

13.07.2020 թվականին աշխատողը հերթական հաճախորդի հետ նախնական խորհրդատվության ընթացքում պատահաբար կամ դիտավորյալ վերջինիս էլեկտրոնային հասցեին ուղարկում է գործատուի խոշոր բիզնես հաճախորդների բազան ներառող էքսել ֆայլ։

15.09.2020 թվականին գործատուի վերահսկողության բաժինը հերթական մոնիթորինգի ժամանակ բացահայտում է նշված դեպքը և 22.09.2020 թվականին զեկուցագրով ներկայացնում գործատուի տնօրենին։

Աշխատողը արձակուրդում է գտնվել 10.08.2020 թվականի մինչև 15.10.2020 թվականը գտնվել է հղիության արձակուրդում, 16.10.2020 թվականից մինչև 22.11.2020 թվականը՝ ամենամյա հերթական արձակուրդում, իսկ 23.11.2020 թվականից մինչև 27.12.2020 թվականը չվճարվող արձակուրդում։

Կադրերի բաժինը 05.11.2020 թվականին աշխատողին ուղարկում է դեպքի մասին գրավոր բացատրություն ներկայացնելու վերաբերյալ գրություն՝ բացատրություն ներկայացնելու համար սահմանելով 3 աշխատանքային օր ժամկետ։

Աշխատողը որևէ ձևով չի արձագանքում նշված գրությանը։

28.12.2020 թվականին գործատուի տնօրենն ընդունում է աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրաման։

Աշխատողը վիճարկում է այդ հրամանը դատարանում՝ նշելով, որ ինքը որևէ խախտում թույլ չի տվել, կարգապահական վարույթի ամբողջ ընթացքում գտնվել է արձակուրդում, իսկ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել իր արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, բացի այդ նշել է, որ չի ծանուցվել նախքան աշխատանքից ազատվելը։

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը։ Օրինական են արդյո՞ք գործատուի գործողությունները։ Իրավաչափ են արդյո՞ք աշխատողի պնդումները։ Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը։ /8 միավոր/

Հարց 2. Թվարկեք գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը և լուծման համար արգելք հանդիսացող հանգամանքները։ /6 միավոր/

Խնդիր 3. /12 միավոր/

«Տրանսգազստրոյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ մատակարար) և «Արդյուրանս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ գնորդ) միջև կնքվել է ապրանքների մատակարարման պայմանագիր։

Պայմանագրի համաձայն՝ մատակարարը մինչև 22.08.2021 թվականը պետք է մատակարարեր աղյուսե սալիկներ, իսկ գնորդը դրանց ընդունման պահին վճարեր դրա դիմաց 12 միլիոն դրամ։

Մատակարարը կատարում է իր պարտականությունը և մատակարարում է ապրանքն ամբողջությամբ։

Գնորդն ապրանքն ընդունելիս առարկում է դրա որակի դեմ՝ նշելով, որ աղյուսները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված որակի պահանջներին։

Մատակարարը ցույց է տալիս աղյուսների որակի սերտիֆիկատը և փորձագիտական եզրակացություն, որի համաձայն ապրանքը համապատասխանում է պայմանագրով սահմանված որակի պահանջներին։

Գնորդը 12.09.2021 թվականին ընդունում է ապրանքը, սակայն հրաժարվում է դրա համար վճարել՝ պնդելով, որ կվճարի, երբ հավաստիանա դրանց որակի մեջ։

Մատակարարը 14.12.2021 թվականին դիմում է ՀՀ սնանկության դատարան գնորդին սնանկ ճանաչելու պահանջով և դիմումն ընդունվում է վարույթ։

Գնորդը առարկում է դիմումի դեմ՝ պնդելով, որ սնանկության հատկանիշները բացակայում են, իսկ ինքը չի վճարել ապրանքի համար, քանի որ վստահ չի եղել դրանց որակի հարցում, միաժամանակ նշել է, որ ընդունում է այն հանգամանքը, որ այդ ապրանքների համար կարել է վճարել միայն 3 միլիոն դրամ, որը ինքը չի վիճարկում և պատրաստ է վճարել։

Բացի այդ, գնորդը դատարան է ներկայացնում իր և մատակարարի միջև 12.04.2017 թվականին կնքված փոխառության պայմանագիր, որով մատակարարին տրամադրել է պարտքով գումար 4 միլիոն դրամի սահմաններում՝ մինչև 03.03.2018 թվականը վերադարձնելու պայմանով։

Դրա հիման վրա գնորդը պնդում է, որ իր կողմից վճարման ենթակա 3 միլիոն դրամի և 4 միլիոն դրամի փոխառության գումարի հաշվանցի արդյունքում իր վճարելու

պարտավորությունը դադարում է, ավելին՝ մատակարարն է իրեն պարտք մնում մեկ միլիոն դրամի չափով գումար։

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը։ Կողմերից ու՞մ փաստարկներն են իրավաչափ։ Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը։ /5 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք հարկադիր սնանկության հատկանիշները և պարտատերի կողմից իրենց պահանջների ներկայացման կարգը։ /4 միավոր/

Հարց 3. Ինչպիսի՞ն կլիներ Ձեր դիրքորոշումը, եթե «Տրանսգազստրոյ» ՍՊԸ-ն «Արդյուրանս» ՍՊԸ-ին սնանկ ճանաչվելու մասին դիմում ներկայացնելուց 60 օր առաջ իր պահանջը զիջած լիներ «Ձեթ» ՍՊԸ-ին, «Ձեզ» ՍՊԸ-ն ներկայացներ պահանջ «Արդյուրանս» ՍՊԸ-ի դեմ վերջինիս սնանկության գործի[1] շրջանակներում, իսկ «Արդյուրանս» ՍՊԸ-ն բարձրաձայներ հաշվանցի մասին։ /3 միավոր/

Խնդիր 4. /10 միավոր/

«Արթսեմինդասթրիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ունի երեք մասնակից՝ Արտակ Ամիրանյանը 34 տոկոսով, «Իքս» ՓԲԸ-ն 27 տոկոսով և Ստեփան Ամիրանյանը 39 տոկոսով։

«Իքս» ՓԲԸ-ի ընդհանուր ժողովը միաձայն 12.03.2021 թվականին որոշում է կայացնում Ընկերությունում ունեցած իր 27 տոկոս բաժնեմասը վաճառել «Իքս» ՍՊԸ-ի տնօրեն և հիսուն տոկոսից ավելի մասնակցություն ունեցող Արշավիր Ամիրանյանին։

Նշված որոշման հիման վրա «Իքս» ՓԲԸ-ի և Արշավիր Ամիրանյանի միջև կնքում է բաժնեմասի առուծախի պայմանագիր։

Արտակ Ամիրանյանը 22.06.2021 թվականին տեղեկանալով այդ գործարքի մասին՝ անհապաղ հայտնում է նաև Ստեփան Ամիրանյանին։

Ստեփան Ամիրանյանը գտնվելով ԱՄՆ-ում և զբաղված լինելով իր ստարտափերով՝ հետաքրքրություն չի ցուցաբերում խնդրի վերաբերյալ։

Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ Արտակ Ամիրանյանը կազմում և Ստեփան Ամիրանյանի ստորագրմանն է ուղարկում հետևյալ բովանդակությամբ փաստաթուղթ. «Ես՝ «Արթսեմինդասթրիս» ՍՊԸ-ի 39 տոկոս բաժնեմասի սեփականատեր Ստեփան Ամիրանյանս սույնով հաստատում եմ, որ փոխանցում եմ Ընկերությունում իմ ունեցած նախապատվության իրավունքը իմ եղբորը՝ Գրիգոր Ամիրանյանին։»։

Ստեփան Ամիրանյանը ստորագրում և նոտարական վավերացմամբ ու ապոստիլացված փաստաթուղթն ուղարկում է Արտակ Ամիրանյանին։

26.12.2021 թվականին Արտակ Ամիրանյանն ու Գրիգոր Ամիրանյանը հայց են ներկայացնում «Իքս» ՓԲԸ-ի և Արշավիր Ամիրանյանի դեմ։

Հայցի հիմքում դրվում են նախապատվության իրավունքի խախտման, խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների կնքման կարգը խախտելու հանգամանքները։

---

[1] Այս դեպքում սնանկության գործը հարուցվել է այլ սուբյեկտի կողմից, իսկ սնանկ ճանաչվելու հարցն արդեն լուծված է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով։

«Իքս» ՓԲԸ-ն առարկում է հայցի դեմ՝ նշելով, որ նախապատվության իրավունքը չի խախտվել, քանի որ նախ Արտակ Ամիրանյանի մասնակցություն չնչին է և վերջինս նախապատվության իրավունք չի կարող ունենալ, երկրորդ՝ քանի որ բաժնեմասերն օտարվել են «Իքս» ՓԲԸ-ի հետ փոխկապակցված անձի, հետևաբար օտարում տեղի չի ունեցել, բաժնեմասերի իրական սեփականատերը չի փոխվել, ուստի նախապատվության իրավունքի խախտում առկա չէ։

Արշավիր Ամիրանյանն էլ պնդում էր, որ Գրիգոր Ամիրանյանը պատշաճ հայցվոր չէ, քանի որ չունի պաշտպանության ենթակա իրավական շահ։

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը։ Կողմերից ու՞մ փաստարկներն են իրավաչափ։ Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը։ /5 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում շահագրգռվածությամբ և խոշոր գործարքների կնքման կարգը, ինչպես նաև բաժնետիրական ընկերություններում խոշոր գործարքների կնքման կարգը։ /5 միավոր/